ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

«ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

1. Տնտեսագիտությունը որպես գիտություն, դրա զարգացման հիմնական ուղղությունները, գործառույթները և ուսումնասիրության մեթոդները
2. Միկրո, մակրոտնտեսագիտություն, համաշխարհային տնտեսագիտություն: Պոզիտիվային և նորմատիվային տնտեսագիտություն: Նորմատիվային տնտեսագիտությունը և տնտեսական քաղաքականությունը: Կապը այլ գիտությունների հետ
3. Հասարակական վերարտադրության փուլերը: Արտադրություն, բաշխում, փոխանակություն և սպառում: Վերարտադրության ձևերը (պարզ, ընդլայնված, թերարտադրություն)
4. Պահանջմունքի բովանդակությունը, տեսակները և դրանց դասակարգումը (ֆիզիոլոգիական, նյութական, հոգևոր, սոցիալական պահանջմունքներ): Մասլոուի բուրգը: Պահանջմունքների անընդհատ բարձրացման օրենքը
5. Բարիք և ռեսուրս, դրանց հիմնական տեսակները: Տնտեսական և ոչ տնտեսական բարիքներ: Նյութական և ոչ նյութական բարիքներ: Հասարակական և մասնավոր բարիքներ: Տնտեսական ռեսուրսների սահմանափակությունը
6. Արտադրության գործոնները: Արտադրական հնարավորությունների կորը, դրա տեղաշարժը պայմանավորող գործոնները
7. Այլընտրանքային արժեք: Գործարքային ծախսերը և դրանց տեսակները
8. Տնտեսական համակարգի հիմնախնդիրները. ի՞նչ արտադրել, ինչպե՞ս արտադրել, ու՞մ համար արտադրել և դրանց լուծման առանձնահատկությունները տարբեր տնտեսական համակարգերում
9. Շուկայական տնտեսական համակարգի էությունը և դասակարգման չափանիշները
10. Շուկայի գործառույթները (կարգավորման, գնագոյացման, միջնորդական, խթանման, տեղեկատվական): Շուկայի գործողության սկզբունքները (տնտեսավարող սուբյեկտների իրավահավասարությունը, տնտեսական գործունեության ինքնակարգավորումը, ազատ գնագոյացումը, պայմանագրային հարաբերությունների ազատությունը, ինքնածախսածածկումը, տնտեսական պատասխանատվությունը, սպառողի գերակայությունը)
11. Շուկայի հիմնական տարրերը: Պահանջարկ, առաջարկ, գին և մրցակցություն
12. Շուկայի օբյեկտները և սուբյեկտները: Տնային տնտեսություն, ֆիրմա (ձեռնարկություն), պետություն (կառավարություն): Շուկայի ենթակառուցվածքը և դրա հիմնական տարրերը
13. Սեփականության էությունը: Սեփականության հարաբերությունների տնտեսական և իրավական կողմերը: Սեփականության ձևերը

14. Սեփականության իրավունքի սպեցիֆիկացիան (հատկորոշումը): Քոուզի տեսությունը: Սեփականության իրավունքի Օնորեի փունջը
15. Պահանջարկի տնտեսական օրենքը և դրա գործողության մեխանիզմը: Եկամտի և փոխարինման էֆեկտները: Պահանջարկի կորը: Պահանջարկի փոփոխության վրա ազդող գնային և ոչ գնային գործոնները
16. Պահանջարկի օրենքի պարադոքսները: Գիֆֆենի, Վեբլենի և պերճանքի (սնոբի) էֆեկտները
17. Առաջարկի տնտեսական օրենքը և դրա գործողության մեխանիզմը: Առաջարկի կորը: Առաջարկի փոփոխության վրա ազդող գնային և ոչ գնային գործոնները
18. Պահանջարկի առաձգականությունը: Պահանջարկի խաչաձև առաձգականություն: Էնգելի կորերը
19. Առաջարկի առաձգականությունը: Առաջարկի առաձգականության վրա ազդող գործոնները
20. Պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունը: Հավասարակշռության գինն ու դրա խախտման հետևանքները: Գնի առաստաղ և դեֆիցիտ, գնի հատակ ու ավելցուկ
21. Սպառողական վարքագծի էությունը և դրա ձևավորման վրա ազդող գործոնները: Ընդհանուր և սահմանային օգտակարություն: Սահմանային օգտակարության նվազման օրենքը
22. Անտարբերության կորերը, դրանց տնտեսագիտական բովանդակությունը: Սպառողի հավասարակշռությունը
23. Բյուջետային սահմանափակումը և սպառողական վարքագիծը: Բյուջետային գծի վրա ազդող գործոնները: Սպառողի հավասարակշռությունը
24. Արտադրության ծախսերի էությունը և կառուցվածքը: Հաստատուն, փոփոխուն ու համախառն ծախսեր
25. Տնտեսական ծախսի բովանդակությունը: Անվերադարձ ծախսեր: Արտաքին (ակնհայտ) և ներքին (ոչ ակնհայտ) ծախսեր
26. Շահույթի էությունը և դերը շուկայական տնտեսության մեջ: Հաշվապահական, տնտեսական (զուտ) շահույթ ու նորմալ շահույթ: Համախառն, միջին և սահմանային հասույթ
27. Տնտեսական մրցակցության էությունը և դերը շուկայական տնտեսության մեջ: Մրցակցության ձևերը: Կատարյալ մրցակցության էությունը և բնորոշ հատկանիշները
28. Ոչ կատարյալ մրցակցության էությունը, բնորոշ հատկանիշները և ձևերը
29. Զուտ (մաքուր) մոնոպոլիա (մենաշնորհ): Գինը, պահանջարկը և շահույթը զուտ մոնոպոլիայի պայմաններում
30. Բնական մոնոպոլիան և դրա ձևավորման նախադրյալները: Մասշտաբի էֆեկտը
31. Օլիգոպոլիական մրցակցության բնույթը
32. Մոնոպոլ մրցակցությունը: Շահույթը մոնոպոլ մրցակցության պայմաններում: Ոչ գնային մրցակցություն
33. Մոնոպսոնիան և նրա դրսևորումները
34. Տնտեսության մոնոպոլացման աստիճանի գնահատումը: Շերմանի օրենքը, Կլեյտոնի օրենքը, Ռոբինսոն-Պետմանի օրենքը, Լերների ինդեքսը, Հերֆինդալի ինդեքսը

35. Արտադրության գործոնները: Արտադրական ֆունկցիան և մասշտաբի աճող, նվազող ու հաստատուն էֆեկտները: Արտադրության գործոնի (ռեսուրսի) պահանջարկը և դրա վրա ազդող գործոնները
36. Իզոքվանտ: Տեխնոլոգիական փոխարինման սահմանային նորմա: Իզոքոստ (բյուջետային սահմանափակություն)
37. Աշխատանքի շուկայի բնորոշ գծերը և առանձնահատկությունները: Աշխատուժը որպես աշխատանքի շուկայի օբյեկտ
38. Աշխատանքի պահանջարկը և առաջարկը, դրանց փոփոխության վրա ազդող գործոնները: Հավասարակշռությունը աշխատանքի շուկայում: Հավասարակշռված աշխատավարձը
39. Աշխատավարձը որպես գործոնային եկամուտ: Աշխատավարձի մեծությունը որոշող գործոնները, ձևերը և համակարգը: Անվանական, իրական և նվազագույն աշխատավարձ
40. Ոչ կատարյալ մրցակցության պատճառները աշխատանքի շուկայում (արհմիություն, պետություն, խոշոր ֆիրմաներ): Մոնոպսոնիան աշխատանքի շուկայում
41. Կապիտալը որպես արտադրության գործոն: Ֆիզիկական կապիտալը և կապիտալի ծառայությունները
42. Հիմնական և շրջանառու կապիտալ: Հիմնական կապիտալի մաշվածությունը ու դրա ձևերը: Ամորտիզացիան և դրա հաշվարկման եղանակները
43. Կապիտալի պահանջարկը և առաջարկը փոխատվական կապիտալի շուկայում, դրա վրա ազդող գործոնները
44. Տոկոսը որպես գործոնային եկամուտ: Տոկոսը որպես հավասարակշռության գին: Անվանական և իրական տոկոսադրույք
45. Հողը՝ որպես արտադրության գործոն և նրա առանձնահատկությունները: Հողատիրություն և հողօգտագործում: Հողի շուկա
46. Հողի առաջարկը և պահանջարկը: Ռենտայի տնտեսագիտական բովանդակությունը: Հավասարակշռությունը հողի շուկայում: Հողի գինը
47. Ձեռնարկատիրական գործունեության էությունը և բնորոշ գծերը: Ձեռնարկատիրությունը որպես արտադրության գործոն
48. Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպատնտեսական և կազմակերպաիրավական ձևերը, դրանց առավելություններն ու թերությունները
49. Փոքր, միջին և խոշոր ձեռնարկությունների դերը: Դրանց առավելությունները և թերությունները
50. Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ): ՀՆԱ հաշվարկման մեթոդները (ավելացված արժեքի մեթոդ, ծախսային մեթոդ, եկամտային մեթոդ): Անարտադրողական գործարքների բացառումը ՀՆԱ-ից: Պոտենցիալ ՀՆԱ
51. Համախառն ազգային արդյունք (ՀԱԱ):Ազգային հաշիվների համակարգի ցուցանիշները. Զուտ ներքին արդյունք (ԶՆԱ), ազգային եկամուտ (ԱԵ), անձնական կամուտ, տնօրինվող եկամուտ (ՏԵ)
52. Անվանական և իրական ՀՆԱ: ՀՆԱ-ի դեֆլյատորն ու սպառողական գների ինդեքսը

53. Ամբողջական պահանջարկը (AD): Հարստության, տոկոսադրույքի և ներմուծման էֆեկտները: Ամբողջական պահանջարկի փոփոխության վրա ազդող գործոնները
54. Ամբողջական առաջարկը (AS): Ամբողջական առաջարկի դասական և քեյնսյան տեսությունների համադրումը
55. Ամբողջական առաջարկի փոփոխության վրա ազդող գործոնները
56. Մակրոտնտեսական հավասարակշռությունը AD-AS մոդելում: Հավասարակշռության խախտումները
57. Եկամտի, սպառման և խնայողության փոխհարաբերության քեյնսյան տեսությունը: Սպառման և խնայողության ֆունկցիան
58. Սպառման և խնայողության միջին ու սահմանային հակումները և դրանց փոփոխության վրա ազդող գործոնները
59. Խնայողության և ներդրումների փոխհարաբերության քեյնսյան մոտեցումը: IS մոդելը: Ներդրումների փոփոխության վրա ազդող գործոնները
60. Մուլտիպլիկատորի գործակիցը: Խնայողության պարադոքսը և դրա պատճառները
61. Վարկի բովանդակությունը, աղբյուրները և վարկավորման սկզբունքները: Վարկի ձևերը
62. Փողի ծագումը և էությունը: Փողի գործառույթները: Փողի ագրեգատները և դրամաշրջանառության ձևերը
63. Փողի առաջարկը: Փողի առաջարկի մենաշնորհային բնույթը: Կենտրոնական բանկը և նրա գործառույթները
64. Փողի պահանջարկը: Դասական, Ֆիշերի և քեմբրիջյան հավասարումները
65. Շրջանառության մեջ անհրաժեշտ փողի քանակի ժամանակակից տեսությունները (Ի. Ֆիշեր, Մ. Ֆրիդմեն)
66. Բանկերի էությունը, գործառույթները և տեսակները: Առևտրային բանկերը և դրանց գործառնությունները
67. Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքները: ԿԲ ընդլայնող (մեղմ, էժան փողերի) և զսպող (կոշտ, թանկ փողերի) դրամավարկային քաղաքականությունն ու դրանց ազդեցությունները
68. Արժեթղթերի ծագումը և էությունը: Արժեթղթերի հիմնական տեսակները
69. Արժեթղթերի շուկայի կառուցվածքը: Ֆոնդային բորսա
70. Արժեթղթերի փոխարժեքը: Բորսայական ինդեքսները
71. Պետական բյուջեի կառուցվածքը: Պետական բյուջեի եկամուտները և ծախսերը
72. Հարկի տնտեսագիտական բովանդակությունը և գործառույթները: Հարկման սուբյեկտը, օբյեկտը, բազան, միավորը, դրույքաչափը
73. Անուղղակի և ուղղակի հարկեր: Ոչ հարկային վճարներ
74. Հարկման սկզբունքները: Հարկման եղանակները: Լաֆֆերի կորը
75. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրներն ու եղանակները
76. Պետական պարտքը և դրա տեսակները:Արտաքին և ներքին պետական պարտք

77. Հարկաբյուջետային քաղաքականություն: Ընդլայնող և զսպող հարկաբյուջետային քաղաքականությունները
78. Ինֆլյացիայի բնորոշումը և չափումը: Ինֆլյացիայի տեսակները
79. Ինֆլյացիայի առաջացման պատճառները: Պահանջարկի և առաջարկի ինֆլյացիա
80. Տնտեսական պարբերաշրջանի (տնտեսական ցիկլեր) ընդհանուր բնութագիրը և փուլերը
81. Տնտեսական պարբերաշրջանի տևողությունը: Միտչելի, Կիտչինի և Կոնդրատևի տնտեսական պարբերաշրջանները
82. Տնտեսական պարբերաշրջանի կարգավորումը և կայունացնող քաղաքականությունը
83. Գործազրկության էությունը և պատճառները: Գործազրկության տեսակները: Գործազրկության տնտեսական ու ոչ տնտեսական ծախսերը
84. Լրիվ զբաղվածությունը և գործազրկության բնական մակարդակը: ՀՆԱ-ի ու գործազրկության միջև կապը: Օուքենի օրենքը
85. Ինֆլյացիան և գործազրկությունը: Ֆիլիպսի կորն ու դրա տնտեսագիտական բացատրությունը
86. Տնտեսական աճի սահմանումը, նշանակությունն ու գնահատումը: Կոբբ-Դուգլասի ֆունկցիան և ժամանակակից մեկնաբանությունները
87. Բնակչության եկամուտների էությունը և կառուցվածքը: Եկամուտների անհավասարության գնահատման եղանակները: Լորենցի կորը: Ջինիի գործակիցը
88. Աղքատության հիմնախնդիրը: Աղքատության մակարդակի գնահատման ցուցանիշները: Աղքատության գիծը և նվազագույն սպառողական զամբյուղը
89. Աղքատության հաղթահարման պետական քաղաքականությունը և սոցիալական քաղաքականության ուղղությունները
90. Միջազգային առևտուր: Արտահանում և ներմուծում: Միջազգային առևտրից ստացվող օգուտները